


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

<<Գեղարքունիքի  
տարածաշրջանային պետական  
քոլեջ>> ՊՈԱԿ-ի տնօրենի  
2016 թ-ի << 12 >> << 29 >>  
թիվ 994 հրամանով



**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ »**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

<<ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>>  
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ

**1.Պաշտոնի անվանումը`**

գործադիր մարմնի ղեկավար` կազմակերպության տնօրեն:

**2.Զբաղմունքի դասակարգչի կոդը`** 1210.

**3.Մասնագիտության և մասնագիտացման կոդը`** 2030177.

**4.Աշխատանքի բնույթը`**

Կազմակերպության տնօրենի աշխատանքը պատկանում է ծառայողների խմբին:

**5.Աշխատանքի պայմանները`**

Կազմակերպության տնօրենի աշխատանքը համարվում է ոչ ծանր և առողջության համար ոչ վնասակար աշխատանք:

**6.Աշխատաժամանակի ռեժիմը`**

Կազմակերպության տնօրենի աշխատաժամանակի ռեժիմը սահմանվում է կազմակերպության ներքին կարգապահական կանոններով:

Կազմակերպության տնօրենի համար սահմանված աշխատաժամանակը գերազանցող աշխատանքը չի համարվում արտժամյա:

**7.Հիմնական գործառույթները`**

7.1.տնօրինել և օգտագործել ընկերության գույքն ու ֆինանսական միջոցները և պատասխանատվություն կրել դրանց ոչ նպատակային օգտագործման համար:

7.2. կազմակերպել, համակարգել և ղեկավարել ընկերության աշխատակազմի աշխատանքը` իր կողմից ընդհունված իրավական ակտերի միջոցով:

**8.Մասնագիտական գիտելիքների և աշխատանքյին փորձի նկատմամբ պահանջները`**

ա)Կազմակերպության տնօրենի պաշտոնին նշանակվում է այն անձը, ով ունի բակալավրի , մագիստրոսի աստիճանով բարձրագույն կրթություն կամ գիտական աստիճան :

բ)Կազմակերպության տնօրենի աշխատանքը համարվում է միջին , բարդ և առավել բարդ աշխատանք :

**9.Կազմակերպության տնօրեն չի կարող նշանակվել այն անձը`**

ա) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար , և նրա դեատվածությունը մարված է կամ հանված չէ.

բ) որին , օրենքի համաձայն, արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել

գ)որը նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար ,

դ)դատարանի` օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ , սահմանափակ գործունակ .

ե)օրինական ուժի մեջ մտել է նրա նկատմամբ կայացրած մեղադրական դատավճիռը.

զ)դատական կարգով նրա ղեկավարած կազմակերպությունը ճանաչվել է սնանկ:

**10.Կազմակերպության տնօրենը պետք է իմանա`**

10.1.քաղաքացիական , աշխատանքային , հարկային , վարչական իրավախախտումների

մասին ՀՀ օրենսդրությունը.

10.2.կազմակերպության տնտեսական և ֆինանսական գործունեության հիմունքները .

10.3.պայմանագրերի կնքման և ձևակերպման կարգը .

10.4.աշխատանքի կազմակերպման և կառավարման հիմունքները.

10.5.աշխատանքի և հակահրդեհային անվտանգության կանոնները:

### **11.Իր գործունեության ընթացքում կազմակերպության տնօրենը ղեկավարվում է`**

11.1. ՀՀ օրենսդրությամբ .

11.2. կազմակերպության կանոնադրությամբ.

11.3. կազմակերպության զարգացման հեռանկարային պլանով:

### **12.Պաշտոնի նշանակումը`**

Կազմակերպության տնօրենի պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է

կազմակերպության հիմնադիրը:

### **13.Կառուցվածքային ստորաբաժանումը`**

Կազմակերպության տնօրենի պաշտոնն ընդգրկված է կազմակերպության ներքին կառուցվածքային ստորաբաժանում համարվող տնօրինության ստորաբաժանումում`

Կազմակերպության կառավարման խորհուրդ - Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար` տնօրեն:

### **14.Ենթակայությունը`**

Կազմակերպության տնօրենն անմիջականորեն ենթարկվում և հաշվետու է

կազմակերպության ընդհանուր ժողովին.

### **15.Կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը.**

#### **15.1.Կազմակերպության տնօրենն իրավունք ունի`**

15.1.1. ներկայացնել կազմակերպության շահերը ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհարաբերություններում.

15.1.2. առանց լիազորագրի հանդես գալ կազմակերպության անունից , ներկայացնել նրա շահեր և կնքել գործարքներ.

15.1.3. տալ կազմակերպության անունից` հանդես գալու լիազորագրեր , այդ թվում` վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

15.1.4. կատարել աշխատանքի բաշխում իր տեղակալներ միջև.

15.1.5 աշխատանքի նշանակել և աշխատանքից ազատել կազմակերպության աշխատակիցներին , նրանց նկատմամբ կիրառել խրախուսման միջոցներ և նշանակել կարգապահական տույժեր.

15.1.6. սահմանել կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

15.1.7. հաստատել կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կառավարման մարմնին.

15.1.8. նշանակել կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալ համապատասխան լիազորագրեր , եթե սույն լիազորությունը վերապահված չէ կառավարման մարմնին.

15.1.9.իր լիազորությունների սահմաններում ` արձակել հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

15.1.10. բացել հաշվարկային և այլ հաշիվներ բանկային կազմակերպություններում.

15.1.11.տնօրինել կազմակերպության միջոցներին ու գույքը ` ՀՀ օրենսդրական ակտերի պահանջների պահպանմամբ և կազմակերպության կանոնադրությանը համապատասխան.

15.1.12.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել կազմակերպության տեխնիկական, տեխնոլոգիական , կազմակերպչական, ինչպես նաև աշխատողների անձնական տվյալների պաշտպանությունը:

## **15.2.Կազմակերպության տնօրենը պարտավոր է `**

15.2.1.գործող օրենսդրությանը համապատասխան ղեկավարել կազմակերպության արտադրատնտեսական և ֆինանսական գործունեությունը ` կրելով լրիվ պատասխանատվություն կայացրած որոշումների հետևանքների և կազմակերպության գույքի պահպանության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև իր գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների համար.

15.2.2.կազմակերպել բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, արտադրական միավորների աշխատանքը և արդյունավետ փոխգործակցությունը, ուղղորդել նրանց գործունեությունը ընկերության աշխատանքի արդյունավետության բարձրացմանը , արտադրանքի, ծառայությունների և եկամուտների ավելացմանը.

15.2.3.կազմակերպել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառումը.

15.2.4. ապահովել ընկերության բոլոր պարտավորությունների կատարումը պետական և համայնքային բյուջեների, հիմնադրամների, մատակարարների, պատվիրատուների և վարկատուների ` ներառյալ բանկերի նկատմամբ .

15.2.5.արտադրատնտեսական գործունեությունը կազմակերպել աշխատանքի կազմակերպման և կառավարման առաջադիմական ձևերի կիրառման , աշխատանքային , ֆինանսական և նյութական նորմատիվների հիման վրա, ուսումնասիրել շուկայի իրադրությունը ծառայության և աշխատանքի որակի և տեխնիկական մակարդակի, դրանց տեխնիկական արդյունավետության բարձրացման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով.

15.2.6. միջոցներ ձեռնարկել ընկերության համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով ապահովելու, նրանց գիտելիքները և փորձն արդյունավետ օգտագործելու և զարգացնելու , նրանց կյանքի և առողջության համար աշխատանքի անվտանգ ու բարենպաստ պայմաններ ստեղծելու, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրության պահանջները պահպանելու ուղղությամբ:

15.2.7. ապահովել սահմանված ժամկետներում աշխատավարձի վճարումը , ինչպես նաև յուրաքանչյուր առանձին աշխատողի նյութական և բարոյական շահագրգռվածության և պատասխանատվության բարձրացման նպատակով.

15.2.8.լուծել ընկերության ֆինանսատնտեսական և արտադրատնտեսական գործունեության հետ կապված հարցերը.

15.2.9.ապահովել ընկերության գործունեության և նրա տնտեսական կապերի իրականացման օրինականության պահպանումը, պայմանագրային և ֆինանսական

կարգապահության ամրապնդումը.

15.2.10. պաշտպանել ընկերության շահերը դատարանում , պետական իշխանության այլ մարմիններում.

**15.3. Կազմակերպության տնօրենը պատասխանատվություն է կրում .**

15.3.1 իր պաշտպանական պարտականությունների չկատարման համար.

15.3.2. աշխատանքային գործունեության իրականացման ընթացքում իրավախախտումներ թույլ տալու համար .

15.3.3. իր կողմից ընդունված այնպիսի որոշումների հետևանքների համար , որոնք , գործող օրենսդրության , կանոնադրության, այլ նորմատիվ իրավական ակտերին համահամապատասխան , դուրս են իր իրավասության շրջանակներից:

Եթե պատասխանատվություն առաջացնող գործողությունները կատարվել են այնպիսի անձանց կողմից , որոնց կազմակերպության տնօրենը փոխանցել է իր իրավունքները , ապա կազմակերպության տնօրենը չի ազատվում պատասխանատվությունից.

15.3.4. կազմակերպության հիմնադիրների շահերին հակասող կամ սեփական շահերի համար ընկերության գույքի և միջոցների անբարեխիղճ օգտագործման համար .

15.3.5. կազմակերպության տնօրենը պարտավոր է հատուցել նաև ընկերությանը պատճառած վնասները, որոնք առաջացել են նրա ոչ պատշաճ գործունեության հետևանքով :Վնասները հաշվարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայնեցված է

Անմիջական ղեկավարի հետ՝ \_\_\_\_\_

/ստորագրությունը/

/անվանատառը, ազգանունը/

<< \_\_\_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 201 թ.

Աշխատանքի նկարագրությանը

Ծանոթացա՝ \_\_\_\_\_

/ստորագրությունը/

/անվանատառը, ազգանունը/

<< \_\_\_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 201 թ.